ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 36-Ն

« 19 » օգոստոսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2014 թվականի բյուջեի հաստատման մասին>> N 73-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Գործառական դասակարգման բաժին 11, խումբ 1, դաս 2 (պահուստային ֆոնդ) և տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածի 1359.4 թիվը փոխարինել 459.4 թվով:
2. Գործառական դասակարգման բաժին 03, խումբ 1, դաս 1 (ոստիկանություն) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 250.0 թիվը 0 (զրո) թվով:
3. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի 0 (զրո) թիվը փոխարինել 400.0 թվով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածի 0 թիվը փոխարինել 150.0 թվով:
4. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 5, դաս 1 (ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի 11500 թիվը փոխարինել 12100.0 թվով:
5. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 6, դաս 1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածից 80000 դրամ հատկացնել շինանյութերի ձեռք բերման համար և որպես աջակցություն տրամադրել Անիի Հրշեջ Փրկարարական ջոկատին՝ ամենագնաց փրկարարական մեքենայի համար ավտոտնակ կառուցելու նպատակով, 5122 (վարչական սարքավորումներ) հոդվածից 150000 դրամ հատկացնել հեռուստացույց ձեռք բերելու և որպես նվիրատվություն հատկացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Երկրապահ Կամավորական Միություն>> Անիի տարածքային բաժանմունքին:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
19 օգոստոսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 37-Ն

« 19 » օգոստոսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՕՏԱՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով, 67-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է</u>

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքի բնակելի կառուցապատման գոտում Գագարինի փողոցի N 1/5 հասցեում գտնվող հողատարածքում հասարակական նշանակության օբյեկտ կառուցելու նպատակով (կադաստրային ծածկագիր 008-003-0001-0002) 89.1 քառակուսի մետր հողատարածքը օտարել աճուրդային եղանակով:
2. Հողատարածքի մեկնարկային գին հաստատել հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով՝ 47045 (քառասունյոթ հազար քառասունհինգ) դրամ:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
19 օգոստոսի 2014 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ 38

« 19 » օգոստոսի 2014 թվական քաղաք Մարալիկ

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5 կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

ք. Մարալիկ
19 օգոստոսի 2014 թվական

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

N	Ազգանուն, անուն	Գումարի չափ
1.	Գալոյան Վահան AH 0554580	25000 (քսանհինգ հազար) դրամ
2	Թորոսյան Արամայիս 2105610013	30000 (երեսուն հազար) դրամ
3	Աղաբեգյան Ագապի AM 0911006	30000 (երեսուն հազար) դրամ
4	Մկրտչյան Սահականուշ Ռաֆիկի AF 0541994	30000 (երեսուն հազար) դրամ
5	Հովհաննիսյան Արման Ժորայի AG 0322397	25000 (քսանհինգ հազար) դրամ
6.	Բրուտյան Մառուսյա AG 0284531	30000 (երեսուն հազար) դրամ
7	Բրուտյան Գոհարիկ AN 0704946	30000 (երեսուն հազար) դրամ
	Ընդամենը	200000 (երկու հարյուր հազար) դրամ